

Սանթրյան Վ. – Պատվավոր տեղ մեր մշակութային ընտանիքում – թերթ,
«Հայաստանի Հանրապետություն», Ե., 16.10.2015

Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան 70 տարեկան է

«Այսպիսի բուհի կարեւորությունը որեւէ երկրի հասարակական—մշակութային կյանքում ակնհայտ իրողություն է: Ավելի խոսուն փաստ այս մասին, քան բուհի հիմնադրման տարեթիվն է, չի կարող լինել: Հայրենական մեծ պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ երկրի քայքայված տնտեսության եւ անհուսության մատնված ժողովրդի հոգեբանության պայմաններում գեղարվեստի բուհի հիմնադրումը վկայություն է ինչպես նման վիճակներում, նաեւ՝ առհասարակ արվեստի, գեղարվեստական կրթության անհրաժեշտություն ու օգտակարություն հանրային կյանքում»,—հայտարարեց Երեւանի գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը, Հայաստանի ազգային պատկերասրահի որմնանկարների սրահում ելույթ ունենալով ուսումնական հաստատության 70—ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստում:

Մինչեւ հիմնադրումը հենց անցյալ դարի 40—ական թվականների սկզբներին էր շրջանառվում գեղարվեստական բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալու խնդիրը, որն առավել սատարում էին Արա Սարգսյանը, Մարտիրոս Սարյանը, Գաբրիել Գյուրջյանը, Էդուարդ Իսաբեկյանը եւ Բաբկեն Քոլոզյանը: Առավելապես Արա Սարգսյանի եւ Մարտիրոս Սարյանի ջանքերով էր, որ 1945 թվականին բացվեց գեղարվեստի ինստիտուտը, որի առաջին ռեկտորը եղավ Արա Սարգսյանը, ով նաեւ հետագայում հիմնադրեց Հայաստանի նկարիչների միությունը եւ եղավ նրա առաջին նախագահը:

Ինստիտուտի գործունեությունը անիջականորեն կապված է Մարտիրոս Սարյանի անվան հետ, ով հիմնադրման առաջին օրվանից դասավանդել է բուհում, եղել գեղանկարչության ֆակուլտետի ղեկանը:

Բուհի հիմնադիրների ու դասախոսական առաջին կազմի թվում են այնպիսի անուններ, ինչպիսիք են Հակոբ Կոչոյանը, Եղիշե Մարտիկյանը, Վռամշապուհ Շաքարյանը, Գրիգոր Ահարոնյանը, Ռուբեն Դրամբյանը, Արարատ Ղարիբյանը, Էդուարդ Իսաբեկյանը, Արա Բեքարյանը, Սերգեյ Արուտչյանը, Սուրեն Ստեփանյանը, Բաբկեն Քոլոզյանը, Արփենիկ Նալբանդյանը, Վահան Հարությունյանը: Եվ այդ շրջանի ուսանողներն են հետագայում դարձել մեր կերպարվեստի երեւելիները՝ Ղուկաս Չուբարյան, Նիկողայոս Նիկողոսյան, Վաղինակ Ասլանյան, Գրիգոր Խանջյան, Արա Հարությունյան, Հովհաննես Զարդարյան, Սերգեյ Բաղդասարյան, Սերգեյ Արուտչյան, Մկրտիչ Մեղրակյան, Սուրեն Սաֆարյան, Մարգիս Մուրադյան, Անատոլի Պապյան:

«Հիշատակության արժանի է առաջին տարիների ընդունելության մի դրվագ,— նկատեց Արամ Իսաբեկյանը:—Արա Սարգսյանը, ստանալով նախքան պատերազմը

գեղարվեստի ուսումնարանն ավարտած, բայց դեռ չգորացրված երիտասարդների ընդունելության դիմումները, նրանց պատասխանել է. «Դուք ընդունված եք, դասերն սկսվելու են հոկտեմբերի 1—ից»:

1952 թվականին միավորվել են գեղարվեստի եւ թատերական ինստիտուտները, հետագայում նորից տարանջատվել (1994 թվական):

Ըստ Արամ Իսաբեկյանի, բուհական կյանքի երրորդ՝ անկախության եւ դրան հաջորդող ժամանակների շրջանը նորարարական է եղել ու կառուցողական: Շենքը փրկվել է վթարային վիճակից, ձեռք է բերվել լրացուցիչ մասնաշենք, տարբեր շրջաններում ակադեմիան աջակցություն է ստացել կրթության եւ գիտության նախարարներից, Հայաստանի կառավարության ղեկավարներից: Հիմնադրվել են Գյումրու եւ Դիլիջանի մասնաճյուղերը, ամերիկահայ գործարար Ալբեր Բոյաջյանի ֆինանսական աջակցությամբ եւ ակադեմիայի արտաբյուջետային միջոցներից որոշ հատկացումներ տրամադրելով բացվել է ակադեմիայի ցուցասրահը: Այժմ աշխատանքներ են տարվում դահլիճը վերանորոգելու համար: Ակադեմիայի 27 ուսանող իրենց ուսումն են կատարելագործում եվրոպական եւ ռուսական բուհերում, կապեր են հաստատվել տարբեր երկրների գեղարվեստի բուհերի հետ:

Գեղարվեստի ակադեմիայի հոբելյանը ողջունեց ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ասելով, որ մշակութային բուհերը մեր բուհական համակարգի իրական զարդն են: Գեղարվեստական ակադեմիան հիմնվեց դեռեւս փլատակներից չվերականգնված երկրի պայմաններում, եւ նրա վրա դրված առաքելությունը պարտավորեցնող էր: Ուստի սերունդները այս պարտավորությունն իրականացրել են՝ տալով անուններ ոչ միայն Հայաստանում, այլեւ նրանից դուրս, անուններ, որոնցով մենք այսօր հպարտանում ենք, որոնք վաղուց Գեղարվեստի պետական ակադեմիայի սեփականությունը չեն եւ վաղուց դարձել են մեր ազգային հպարտության եւ ազգային մշակույթի առաքյալները:

Այնուհետեւ նախարարը պարգևատրեց ՀՀ նախագահի հրամանագրով եւ ՀՀ վարչապետի որոշմամբ մեդալների եւ շնորհակալագրերի, ինչպես նաեւ ԿԳ նախարարության հուշամեդալի եւ շնորհակալագրերի արժանացած ակադեմիայի մի խումբ աշխատողների:

ՀՀ մշակույթի նախարարի ուղերձը հրապարակեց, եւ հաստատության մի խումբ աշխատակիցների նախարարության մեդալներ եւ շնորհակալագրեր հանձնեց փոխնախարար Արեւ Սամուելյանը:

Ակադեմիայի հոբելյանը ողջունեցին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր Դավիթ Մուրադյանը եւ ուրիշներ, հրապարակվեց Գյումրու քաղաքապետի ուղերձը:

Հայաստանի գործընկերներին ողջունեց Թբիլիսիից ժամանած պատվիրակության անդամ, տեղի ակադեմիայի ներկայացուցիչ Գեորգի Գուգուշվիլին, հայտարարելով, որ

առաջիկա գարնանը Թբիլիսիում բացվելու է տեղի ակադեմիայի տարբեր տարիների շրջանավարտների աշխատանքների ցուցահանդեսը, եւ ինքը հույս ունի, որ այնտեղ կտեսնի նաեւ հայ հեղինակների գործեր, ովքեր այդ հաստատությունն են ավարտել:

Օրվա երկրորդ կեսին Հայաստանի նկարչի տանը բացվեց Երեւանի գեղարվեստի ակադեմիայի տարբեր տարիների շրջանավարտների աշխատանքների ցուցահանդեսը:

Վանիկ ՍԱՆԹՐՅԱՆ

http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20151016_6&flag=am